ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԱԼԼԱ ՄՀԵՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

**(խմիչքների արտադրության օրինակով)**

**Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

# ՍԵՂՄԱԳԻՐ

**ԵՐԵՎԱՆ 2018**

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Վարազդատի**

**Մաթևոսյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Աշոտ Հակոբի Բայադյան**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
**Կարեն Վասիլիի Ներսիսյան**

**Առաջատար կազմակերպություն՝** **Երևանի պետական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. փետրվարի 20-ին, ժամը $15^{30}$-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունվարի 20-ին:

**008 մասնագիտական խորհրդի տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր գիտական քարտուղար՝**
**Ա.Մ. Սուվարյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

***Հետազոտության թեմայի արդիականությունը:*** Տնտեսավարման շուկայական հարաբերությունների իրացումը հայրենական արտադրական կազմակերպություններին հնարավորություն ընձեռեց ինքնուրույն պլանավորել արտադրական և ֆինանսական միջոցները, իրականացնել ինչպես սեփական կազմակերպության, այնպես էլ բիզնեսի գծով գործընկեր կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծություններ: Մեծ թվով կազմակերպություններ այդ պայմաններում բախվեցին ֆինանսական կայունության ապահովման հիմնախնդրի հետ՝ նպատակ ունենալով նվազեցնելու ֆինանսական անկայուն վիճակում հայտնվելու հավանականությունը: Նշված հիմնախնդրի հետազոտության նշանակությունը և դրա լուծումների անհրաժեշտությունը էականորեն բարձրացավ 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և, մասնավորապես, ՀՀ-ում 2009 և 2014 թթ. տեղի ունեցած ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքային տատանումների հետևանքներով:

Ֆինանսական կայունության գնահատման հիմնախնդիրները նույնպես դասվում են ոչ միայն ֆինանսական այլև ընդհանուր տնտեսական առավել կարևոր հիմնախնդիրների թվին, քանի որ ֆինանսական ցածր կայունությունը կարող է հանգեցնել կազմակերպության մոտ ոչ միայն արտադրության զարգացման, այլև ընթացիկ գործունեության ֆինանսավորման համար միջոցների սղության, անվճարունակության, իսկ վատագույն դեպքում նաև սնանկացման: Միաժամանակ, ֆինանսական բարձր կայուն վիճակը պաշարների ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքի տեսանկյունից փաստում է տնտեսավարման ցածր արդյունավետությունը: Ուստի, կազմակերպության համար ֆինանսական կայունության սահմանների որոշումը նույնպես դասվում է առավել կարևոր և հրատապ լուծումներ պահանջող տնտեսական խնդիրների թվին:

Չնայած հայ տնտեսագետ գիտնականները մեծ թվով հրապարակումներ են նվիրել կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծության հարցերին, կարծում ենք, որ դեռևս համակարգված չեն և տարբեր են նաև նրանց կողմից կիրառված վերլուծության մեթոդները: Ուստի, անհրաժեշտ է մշակել ճյուղային կտրվածքով ցուցանիշների միասնական համակարգ, որոնք հնարավորություն կընձեռեն բավարարել կազմակերպության ֆինանսական կայունության վերաբերյալ շահագրգիռ անձանց տեղեկատվության նկատմամբ առկա պահանջմունքը:

Կազմակերպությունների ֆինանսական կայունության գնահատման, վերլուծության և կանխատեսման, այդ թվում նաև ներքին վերահսկողության նոր մոտեցումների և գործիքների կիրառման անհրաժեշտությունն էլ պայմանավորել է ընտրված թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

***Հետազոտության նպատակը և խնդիրները:*** Ատենախոսության նպատակն է ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպությունների ֆինանսական կայունության վերլուծության մեթոդների և վերահսկողության մոտեցումների կատարելագործումը: Դրված նպատակին հասնելու համար մեր կողմից կարևորվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել կազմակերպության ֆինանսական կայունության տնտեսագիտական բովանդակությունը, բնութագրական մոտեցումները և ներկա փուլում խմիչքներ արտադրող կազմակերպությունների տեսանկյունից դասակարգել առավել էական գործոնները
- պարզաբանել ֆինանսական կայունության վերլուծության և կանխատեսման մեթոդները,
- ուսումնասիրել արտադրական կազմակերպություններում ֆինանսական կայունության վերահսկողության ժամանակակից մոտեցումները
- խմիչքներ արտադրող կազմակերպություններում ֆինանսական կայունության գործոնային վերլուծության միջոցով վեր հանել այդ գործընթացում լուծման ենթակա խնդիրները,
- իրականացնել հետազոտվող կազմակերպություններում ֆինանսական կայունության ներքին վերահսկողության համեմատական վերլուծություն,
- քննարկել խմիչքներ արտադրող կազմակերպություններում ֆինանսական կայունության և վարկունակության փոխկապակցության խնդիրը և մշակել գնահատման նոր մոտեցում,
- խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպությունների փաստացի տվյալների հիման վրա որոշել վարկանշման և ներքին վերահսկողության նպատակով կիրառվող ցուցանիշների սահմանային միջակայքերը,
- առաջարկել ֆինանսական կայունության ներքին վերահսկողության կատարելագործման ուղիներ,
- մշակել վարկանշման վրա հիմնված ֆինանսական կայունության ներքին վերահսկողության մոտեցում:

***Հետազոտության օբյեկտը և առարկան:*** Հետազոտության օբյեկտը ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպություններում ֆինանսական կայունության վերլուծության մոտեցումները, գործիքները և վերահսկողության համակարգերն են: Հետազոտության առարկան տնտեսական մեխանիզմի վերափոխումներին համահունչ ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպությունների ֆինանսական կայունության վերլուծության, կանխատեսման և վերահսկողության մոտեցումների կատարելագործմանն ուղղված հիմնահարցերն են:

***Հետազոտության տեսամեթոդական հիմքերը և տեղեկատվության ապահովումը:***

Ատենախոսության համար մեթոդաբանական ելակետ են ծառայել հայ և արտերկրյա հեղինակների գիտական հետազոտություններն ու մեթոդաբանական բնույթի աշխատանքները:

Հետազոտության հիմքում դրվել են ՖՄՀՍ-1-ը, ՀՀ Կառավարության այս ոլորտին առնչվող համապատասխան որոշումները, միջազգային այլ կազմակերպությունների կազմակերպած գիտաժողովների, սեմինարների նյութերը և նրանց կողմից մշակված մեթոդական ցուցումները: Հետազոտության համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունն ընդգրկում է Հայաստանի վիճակագրական տարեգրքերից և հետազոտված խմիչքներ արտադրող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններից վերցված նյութերը:

Կիրառվել են ուսումնասիրության հաշվապահական հաշվառման, տնտեսական գործունեության վերլուծության, վիճակագրական, տնտեսամաթեմատիկական մոդելավորման, կանխատեսման մեթոդներ:

***Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:*** Հետազոտության ընթացքում ձեռք են բերվել մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են`

- Առաջարկվել է ֆինանսական կայունության գնահատման համալիր մոտեցում ըստ գործոնների, որի կիրառմամբ խմիչքներ արտադրող կազմակերպությունների համար գնահատվել են ֆինանսական վիճակի վրա կապիտալով ապահովվածության, վճարունակության, իրացվելիության, գործարար ակտիվության և շահութաբերության ազդեցության աստիճանները:
- Առաջարկվել է ՀՀ ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող կազմակերպությունների համար ֆինանսական կայունության ներքին վերահսկողության սցենարային լուծումներ:
- Մշակվել է ֆինանսական կայունության և վարկունակության կորելացիոն կապի վրա հիմնված մոտեցում, որի շրջանակներում դասակարգվել են ռեսուրսների օգտագործման ինտենսիվության փուլերը և գնահատվել է ռեսուրսների օգտագործման ակտիվությունից կախված վարկային ռիսկը:
- Բանկային համակարգում կիրառվող վարկանշման մոտեցումներին որպես այլընտրանք, մշակվել է ֆինանսական կայունության ներքին վերահսկողության մոտեցում, հիմնվելով` կապիտալի ներգրավման, հաշվեկշռի իրացվելիության և գործառնական կառավարման ընթացքում առաջացող ռիսկերի վրա:

***Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:*** Կատարված հետազոտությունը կարևոր քայլ է խմիչքների արտադրության հայրենական կազմակերպությունների ֆինանսական կայունության վերլուծության, գնահատման և

ներքին վերահսկողության բարելավման ուղղությամբ։ Հետազոտության ընթացքում մշակվել են և գործնականում կիրառվել են ֆինանսական կայունության ներքին վերահսկողության նոր մոտեցումներ։

Կառուցված ֆինանսական կայունության գործոնային գնահատման համալիր մոտեցումը լայն ընտրանքի դեպքում հնարավորություն է տալիս վեր հանել ճյուղային կտրվածքով կազմակերպությունների ֆինանսական կայունությունը թուլացնող էական գործոնները և միջոցներ ձեռնարկել ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ։

Վերլուծական մեթոդների կատարելագործման առումով կարևորում ենք ֆինանսական կայունության և վարկունակության փոխկապակցությունը գնահատող, իսկ ներքին վերահսկողության աշխատանքերի որակի բարձրացման տեսանկյունից՝ վարկանշման վրա հիմնված ֆինանսական կայունության մոտեցումները։

***Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:*** Հետազոտության դրույթները քննարկվել են ՀՊՏՀ «Կառավարչական հաշվառման ու աուդիտի» ամբիոնի նիստում, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում, գործարարների համաժողովներում, կարևորագույն արդյունքները ներկայացվել են հետազոտված խմիչքներ արտադրող կազմակերպություններ։ Հետազոտության մի շարք արդյունքներ ներդրվել են «ՍԻՍ ՆԱՏՈՒՐԱԼ» ՓԲԸ-ում և նշանակալիորեն բարելավել են կազմակերպության ֆինանսական կայունության ներքին վերահսկողության գործընթացը։

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական 6 հոդվածներում։

***Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:*** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից։ Աշխատանքի ծավալը կազմում է 148 էջ՝ առանց հավելվածների։

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

***Ներածությունում*** հիմնավորվել են թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, ստացված հիմնական տեսական ու գործնական արդյունքները, ինչպես նաև գիտական նորույթն ու դրա գիտագործնական նշանակությունը, կիրառման հնարավոր ուղղությունները և կառուցվածքը։

***Ատենախոսության առաջին՝*** «***Ֆինանսական կայունության վերլուծության և վերահսկողության տեսամեթոդաբանական***

***հիմքերը» գլխում*** պարզաբանվել է կազմակերպությունների ֆինանսական կայունության տնտեսական բովանդակությունը, ազդող հիմնական գործոնները: Հանգամանալից ներկայացվել են ֆինանսական կայունության վերլուծության, գնահատման ու կանխատեսման մեթոդները և ներկայացվել են ֆինանսական կայունության վերահսկողության ժամանակակից մոտեցումները:

Կազմակերպության ֆինանսական կայունությունը համարվում է ազգային տնտեսական համակարգի արդյունավետ զարգացման կարևոր պայմանը: Երկրի և նրա տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կայունության տեսական և կիրառական բնույթի հիմնախնդիրների նշանակությունը որոշվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների, ներքին և արտաքին գործոնների ազդեցության հանրագումարի արդյունքում:

Ըստ ատենախոսի ուսումնասիրությունների՝ խմիչքներ արտադրող հայրենական արտադրական կազմակերպությունների ֆինանսական կայունությունը կախված է մեծ թվով ներքին և արտաքին գործոններից, որոնք գործունեության արդյունավետության վրա ցուցաբերում են ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Նկատի ունենալով նշված հանգամանքը, առաջարկվել է կազմակերպության ֆինանսական կայունության վրա ազդող ճգնաժամային գործընթացների առաջացման պատճառների դասակարգման մոտեցում:

Վճարունակության և ֆինանսական կայունության փոխկապակցության համատեքստում ատենախոսը կարևորել է Դ. Դյուրանի կողմից առաջարկած մոտեցումը[1], իսկ իրացվելիության և ֆինանսական կայունության փոխկա-պակցության համատեքստում համեմատական վերլուծության նպատակով Լ.Դոնցովայի և Ն.Նիկիֆորովայի մոտեցումը[2]:

Ատենախոսի ներկայացրած տեսակետի համաձայն՝ վարկանշման մոտեցումները հնարավորություն են ընձեռում իրականացնել ճյուղային կտրվածքով համեմատական վերլուծություններ և վեր հանել տվյալ ճյուղի կազմակեր-պություններին բնորոշ ուժեղ և թույլ կողմերը: Բայցևայնպես, նոր մոտեցումների մշակումը և գործնական կիրառումը վերափոխվող տնտեսական հարաբերությունների շրջանակներում մնում է խիստ հրատապ և արդիական:

Հայրենական կազմակերպություններում, և մասնավորապես խմիչքների արտադրության ճյուղում, լիարժեք բացահայտված չեն ֆինանսական կայունության ներքին վերահսկողության հիմնահարցերը կազմակերպության տնտեսական վերլուծության

[1] Платежеспособность (Методика Д. Дюрана) [Электронный ресурс] / http://investment-analysis.ru/metodFSA2/duran-solvency.html (дата доступа 07.04.2013).

[2] Донцова Л.В., Никифорова Н.А. Анализ бухгалтерской отчетности. М.: Издательство «Дело и сервис», 2004. 336 с.

և ֆինանսների, դրա գործառույթների, խնդիրների, սկզբունքների, գնահատման չափանիշների և համակարգային կիրառման հնարավորությունների տեսանկյունից: Հետևաբար, ֆինանսական կայունության ներքին վերահսկողության համակարգի ձևավորումը և գործնական ներդրումը պետք է դառնա կազմակերպության ֆինանսական կայուն վիճակի ապահովման արդյունավետ գործիքներից մեկը: Որպեսզի վերահսկվի և վերլուծվի կազմակերպության ֆինանսական վիճակը, ինչպես նաև գիտականորեն հիմնավորված որոշվեն կազմակերպության ֆինանսական քաղաքականության հիմնական ուղղությունները նրա կայուն աճի նպատակով, անհրաժեշտ է բացահայտել ֆինանսական կայունության վրա հնարավոր դրական և բացասական ազդեցություններով պայմանավորված փոփոխությունները:

Տնտեսական ինտեգրացման ներկա փուլում հայրենական արտադրական կազմակերպությունները, և մասնավորապես, խմիչքների արտադրություն իրականացնողները, ստիպված կլինեն ապահովելու ներքին վերահսկողության համակարգի տարրերի հաշվեկշռվածությունը այնպես, որպեսզի հնարավոր լինի առավել արդյունավետ ձևով օգտագործել կազմակերպության ներուժը և բարձրացնել նրա մրցունակությունը:

***Ատենախոսության երկրորդ՝ «Ֆինանսական կայունության վերլուծության և վերահսկողության մոտեցումները խմիչքներ արտադրող կազմակերպություններում» գլխում*** իրականացվել է ֆինանսական կայունության գործոնային վերլուծություն, վեր են հանվել հետազոտված կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդող հիմնական գործոնները, հստակեցվել են այդ գործընթացում լուծում պահանջող խնդիրները: Առանձին ենթահարցով ատենախոսն իրականացրել է ֆինանսական կայունության ներքին վերահսկողության համեմատական վերլուծություն, քննարկվել են ֆինանսական կայունության և վարկունակության փոխկապակցության խնդիրները խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպությունների օրինակով:

ՀՀ խմիչքների արտադրության հետազոտված կազմակերպությունների ֆինանսական կայունությունը գործոնային համակարգի միջոցով վերլուծելու և գնահատելու համար առաջարկվել է մոտեցում: Առաջարկված մոտեցմամբ ֆինանսական դրության ամփոփիչ գնահատականի արդյունքներով ատենախոսը կատարել է հետևյալ եզրահանգումները.

- Ամենաբարձր ազդեցություն դրսևորող գործոն է տարբերակվել «գործարար ակտիվություն» բաղադրիչը, որի համար վերջնական գորմարային գնահատականի համար հաշվարկված կշռային ադեցությունը կազմել է 0.8015:

➢ Որպես երկրորդ կարևոր գործոն է տարբերակվել «իրացվելիություն» բաղադրիչը, որի համար հաշվարկված կշռային ադեցությունը կազմել է 0.0883:

➢ Երրորդ գործոն է տարբերակվել «կապիտալով ապահովվածություն» բաղադրիչը, որի համար հաշվարկված կշռային ադեցությունը կազմել է 0.0614:

➢ Չորրորդ գործոն է տարբերակվել «վճարունակություն» բաղադրիչը, որի համար հաշվարկված կշռային ադեցությունը կազմել է 0.0395:

➢ Ամենացածր ազդեցություն դրսևորող գործոն է տարբերակվել «շահութաբերություն» բաղադրիչը, որի համար հաշվարկված կշռային ադդեցությունը կազմել է 0.0093:

Հիմք ընդունելով վերլուծության արդյունքները հետազոտված խմիչքների արտադրության կազմակեր-պությունների համար ներկայացվել են հետևյալ առաջարկները՝

• ՀՀ խմիչքների արտադրության զարգացման համար առաջնային լուծման ենթակա խնդիր ենք համարում բարձրակ և միջազգային նորեն մրցունակ արտադրանքի թողարկումը, ԵԱՏՄ շուկաներում վաճառքի ծավալների աճը, քանի որ հետազոտված կազմակերպություններն ունեն արտադրական բարձր ներուժ, սակայն միջոցների տեղաբաշխումը դրանցում դեռևս օպտիմալ չէ, պետք է հետազոտված կազմակերպությունները փորձեն բարելավել գործարար ակտիվությունը՝ ապահովելով դրամական հոսքերի խիստ անհրաժեշտ ներհոսքերը:

• Հանրապետությունում կոնյակի և գինու արտադրության ծավալների ավելացման համար հատուկ ուշադրություն պետք է դարձնել խաղողագործության զարգացմանը, կարևորելով նոր սորտերի մշակումը: Դրա իրականացումը կպահանջի ֆինանսավորման նոր մեխանիզմների կիրառում և կլուծի հետազոտված կազմակերպություններում առկա հեռանկարային իրացվելիության կարգավորման խնդիրը, ինչն էլ կբարձրացնի գործընկերային հարաբերություններում դրանց նկատմամբ վստահությունը:

• Ֆինանսական կայունության բարձրացման նպատակով, ատենախոսի կարծիքով, անհրաժեշտ է ավելացնել սեփական կապիտալի հաստատուն մասը, քանի որ շահույթի աճի տեմպը հայրենական կազմակերպություններում բարձր չէ:

Կիրառվող տեսագործնական մոտեցումներից ատենախոսի կողմից էական նշանակություն է տրվել Դ. Դյուրանի մոտեցմանը[3], որի միջոցով երկարաժամկետ հեռանկարում ֆինանսական կայունությունը որոշելու և սնանկացման հավանական վտանգը կանխատեսելու համար իրականացվում է կազմակերպության վճարունակության

[3] Платежеспособность (Методика Д. Дюрана) [Электронный ресурс] / http://investment-analysis.ru/metodFSA2/duran-solvency.html (дата доступа 07.04.2013).

վերլուծություն:Դյուրանի մոտեցմամբ ճեպընթաց վերլուծության միջոցով որոշվում է ֆինանսական կայունության գումարային (ինտեգրալային) գնահատականը: Դ. Դյուրանի մոտեցմամբ ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող ՀՀ կազմակերպությունների համար ստացված արդյունքները ներկայացվել է ստորև բերված թիվ 1 աղյուսակում:

**Աղյուսակ 1**

**Ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող ՀՀ կազմակերպությունների համար**

**Դ. Դյուրանի մոտեցմամբ ստացված արդյունքները**[4]

| Ցուցանիշը | Ալֆա Ֆուդ Սերվիս ՍՊԸ | | Պլազա Սիստեմս ՓԲԸ | | Ունիվեր-սալ -Օրդեր ՍՊԸ | | Սիս Նատուրալ ՓԲԸ | | Ջերմուկ Գրուպ ՓԲԸ | | Թամարա և Անի ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Փաստացի մակարդակ | Տրվող բալը | Փաստացի մակարդակ | Տրվող բալը | Փաստացի մակարդակ | Տրվող բալը | Փաստացի մակարդակ | Տրվող բալը | Փաստացի մակարդակ | Տրվող բալը | Փաստացի մակարդակ | Տրվող բալը |
| Ակտիվների շահու-թաբերություն, % | 19.0 | 34.9 | 119,5 | 50 | 15.5 | 27.2 | 15.1 | 26.5 | 37,38 | 50 | 41,2 | 50 |
| Ընթացիկ իրացվելիու-թյան գործակից | 1.89 | 28.4 | 0.52 | 0 | 0.903 | 0 | 5.64 | 30 | 1,85 | 27.79 | 1,41 | 10 |
| Ինքնավարության գործակից | 0.21 | 1 | -0.35 | 0 | -0.11 | 0 | 0.516 | 14.7 | 0,03 | 0 | -0,095 | 0 |
| Դասերի խմբերը և սահմանային միջակայքերը | 3-րդ դաս | 64.3 | 3-րդ դաս | 50 | 5-րդ դաս | 27.2 | 2-րդ դաս | 71.2 | 2-րդ դաս | 77.79 | 3-րդ դաս | 60 |

Ամփոփելով թիվ 1 աղյուսակի արդյունքները, առենախոսը նշել է, որ հետազոտված ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող կազմակերպություններից՝ ըստ Դ. Դյուրանի մոտեցման, վճարունակության բաղադրիչից կախված, ֆինանսական կայունության երկրորդ դաս է շնորհվել «Սիս Նատուրալ» ՓԲԸ-ին և «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ին, կայունության երրորդ դաս են ստացել «Ալֆա Ֆուդ» Սերվիս ՍՊԸ-ն, «Պլազա սիստեմս» ՓԲԸ-ն և «Թամարա և Անի» ՍՊԸ-ն: Կայունության հինգերորդ դաս է ստացել «Ունիվերսալ Օրդեր» ՍՊԸ-ն: Չնայած, Դ. Դյուրանի մոտեցումը հիմնված է երեք ցուցանիշների վրա, այնուամենայնիվ, ստացված հետազոտական արդյունքները ֆի-նանսական կայունության տեսանկյունից հուսադրող չեն, ինչից հետևում է որ ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող հետազոտված հայրենական կազմակերպություններում առկա է ֆինանսական կայունության բարելավման հիմնախնդիր, որն

4Платежеспособность (Методика Д. Дюрана) [Электронный ресурс] / http://investment-analysis.ru/metodFSA2/duran-solvency.html (дата доступа 07.04.2013). Հաշվարկների հիմքում ընկած են հետազոտված կազմակերպությունների 2015 թ. ֆինանսական հաշվետվությունների տվյալները:

անմիջականորեն պայմանավորված է նաև այդ ուղղությամբ ներքին վերահսկողության արդյունավետ մեխանիզմների բացակայությամբ:

Համեմատական վերլուծության արդյունքներով ատենախոսը հանգել է այն տեսակետին, որ հայրենական ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչքներ արտադրող հետազոտված կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա վճարունակության բաղադրիչը դրսևորել է որպես էական ազդեցություն ցուցաբերած գործոն, ինչը և անհրաժեշտ է հաշվի առնել ներքին վերահսկողության սցենարները մշակելիս:

Իրականացված հետազոտության արդյունքներով ատենախոսը բացահայտել է, որ թե՛ ֆինանսական կայունության, և թե՛ վարկունակության առումով՝ ըստ քանակական գործոնների ազդեցության, Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ում նկատվել են կարգավորման խնդիրներ:

Հիմք ընդունելով «Երևանի Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ի համար առաջարկված որակական գործոնների համար որոշված միջակայքերը, ատենախոսը որոշել է 2010-2015թթ. կտրվածքով այս կազմակերպության վարկունակության դասերը (տես՝ թիվ 2 աղյուսակը):

**Աղյուսակ 2**

**Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ի վարկունակության գնահատումը՝ ըստ որակական գործոնների ազդեցության**[5]

| | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|---|
| Նշանակություն 1 | -0,24 | 0,39 | 2,18 | -0,12 | -0,92 | -3,78 |
| Վարկունակության դասը | **Բավարար** | **Բավարար** | **Բարձր** | **Բավարար** | **Բավարար** | **Բավարար** |
| Նշանակություն 2 | 0,61 | -0,18 | 2,11 | -0,94 | -0,85 | -3,77 |
| Վարկունակության դասը | **Բավարար** | **Բավարար** | **Բարձր** | **Բավարար** | **Բավարար** | **Բավարար** |
| Նշանակություն 3 | 5,25 | 1,28 | 0,91 | 1,31 | -1,35 | 1,08 |
| Վարկունակության դասը | **Բարձր** | **Բավարար** | **Բավարար** | **Բավարար** | **Բավարար** | **Բավարար** |
| Նշանակություն 4 | 0,28 | -2,78 | 1,19 | 1,38 | -0,69 | -2,53 |
| Վարկունակության դասը | **Բավարար** | **Բավարար** | **Միջին** | **Բարձր** | **Բավարար** | **Բավարար** |

Նշանակություն 1: $SR \equiv \overline{FA} * \lambda^{FA}, (2.3.1)$

Նշանակություն 2: $SR \equiv \overline{CA} * \lambda^{CA}, (2.3.2)$

Նշանակություն 3: $SR \equiv MC^{D} * \lambda^{MC,D}, (2.3.3)$

Նշանակություն 4: $SR \equiv \overline{NM} * \lambda^{NM}, (2.3.4)$

[5] Աղյուսակի կառուցման հիմքում ընկած են հետազոտված կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալները:

որտեղ՝

SR-ը իրացումից հասույթն է, դրամ,

$\overline{FA}$-ը հիմնական միջոցների միջին տարեկան մնացորդն է, դրամ,

$\lambda^{FA}$-ը հիմնական միջոցների ֆոնդատարությունն է, դրամ/դրամ,

$\overline{CA}$- ը ընթացիկ ակտիվների միջին տարեկան մնացորդն է, դրամ,

$\lambda^{CA}$-ն ընթացիկ ակտիվների շրջանառելիությունն է, 2010-2015թթ.

$MC^{D}$-ը նյութական ծախսն է, դրամ,

$\lambda^{MC,D}$-ը նյութատարությունն է, դրամ,

$\overline{NM}$ -ը աշատողների միջին թվաքանակն է, մարդ,

$\lambda^{NM}$ -ը աշխատողների արտադրողականությունն է:

«Երևանի Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ում՝ ըստ Նշանակություն 1-ի, հիմնական միջոցների օգտագործման արդյունավետությամբ պայմանավորված, 2012թ., եղել է վարկունակության բարձր մակարդակ, իսկ մնացած տարիներին՝ բավարար մակարդակ: Ըստ էության արդյունքները լիովին համընկնում են ֆինանսական կայունության վերաբերյալ այս գործոնով ստացված գնահատականներին:

Ըստ Նշանակություն 2-ի նկատվել է նույն միտումը ինչը արձանագրվել է Նշանակություն 1-ի դեպքում: Փաստորեն, որակական գործոնների գնահատականներով պայմանավորված, հիմնական միջոցների և ընթացիկ ակտիվների օգտագործման ցածր արդյունավետությունը դարձել է Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ի վարկունակության մակարդակի նվազման պատճառ:

Նշանակություն 3-ի և Նշանակություն 4-ի գծով կատարված դասակարգումը ևս փաստում է, որ նյութական ծախսերի կառավարման և աշխատանքային ռեսուրսների օգտագործման ցածր արդյունավետության պատճառով Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ն նույնպես ունեցել է վարկունակության մակարդակի անկում:

Ֆինանսական կայունության և վարկունակության փոխկապակցության համատեքստում առաջարկված չափանիշների օգտագործումը հնարավորություն է ընձեռում բնութագրել կազմակերպության ֆինանսական վիճակը և դրա հիման վրա կայացնել կառավարչական որոշումներ: Փոխառու կազմակերպության ֆինանսական կայունության և վարկունակության փոխկապակցության գնահատումը առաջարկված մոտեցման միջոցով հնարավորություն է ընձեռում բնութագրել

կազմակերպության ընդհանուր ֆինանսական վիճակը և բարելավել արտադրական ռեսուրսների օգտագործման նկատմամբ ներքին վերահսկողության աշխատանքների արդյունավետությունը:

***Ատենախոսության երրորդ՝ «Ֆինանսական կայունության վերահսկողության կատարելագործման ուղիները» գլխում*** առաջարկվել են ֆինանսական կայունության ռիսկերի ներքին վերահսկողության՝ և վարկանշման վրա հիմնված մոտեցումներ:

Կազմակերպության ճգնաժամային, անկայուն ֆինանսական վիճակի դեպքում, ինչն առկա է եղել Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ում, ատենախոսը վերահսկողության հիմնական խնդիրներից կարևորել է հետևյալները.

- վնասաբեր գործունեության կանխարգելումը և շահույթի ավելացմանն ուղղված միջոցների ձեռնարկումը,
- կապիտալի կառուցվածքում անհրաժեշտ փոփոխությունների իրականացումը,
- գործունեության տեղեկատվական ապահովման կազմակերպման մեխանիզմների կատարելագործումը,
- կազմակերպության ֆինանսական պլանների օպերատիվ ճշգրտումը՝ կիրառելով բյուջետավորման գործընթացը:

Առաջարկված մոտեցման շրջանակներում կազմակերպության ֆինանսական անկայուն, ճգնաժամային վիճակը վկայում է պատահականության և իրադարձությունների կոռելացված չլինելը, ինչն էլ իր հերթին բարդացնում և սահմանափակում է ճշգրիտ կանխատեսումներ կատարելու հնարավորությունները:

Է. Պետերսի[6] առաջարկած R/S վերլուծությամբ որոշված $0,3 \leq S \leq 0,5$ միջակայքում, որտեղ S-ը՝ ֆինանսական վիճակն է՝ հաշվարկված ըստ Հ. Հերսթի մեթոդի[7], վերահսկողության խնդիրներ են տարբերակվել.

- նորամուծական միջոցառումների իրականացումը, ինչը կհանգեցնի իր հերթին նոր ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատմանը,
- կազմակերպության ֆինանսական վիճակն արմատապես փոփոխելու նպատակով նոր ֆինանսական ռազմավարության մշակումը՝ հաշվի առնելով միջոցներ ներգրավելու հնարավորությունները,
- անհրաժեշտության դեպքում նպատակահարմար կարող է լինել ակտիվների մի մասի կամ ամբողջ կազմակերպության վերակազմավորումը,
- վատագույն լուծումներից կհամարվի կազմակերպության սնանկացման գործընթացի իրականացումը:

---

[6]Петерс Э. Фрактальный анализ финансовых рынков: Применение теории хаоса в инвестициях и экономике. – М.: Интернет-трейдинг, 2004. стр. 31-32.

[7]Leland W. E., Taqqu M., Willinger W., Wilson D. V., On the Self-Similar Nature of Ethernet Traffic, Proc. SIGCOM93,. 1993, San Francisco, California, pp. 183-193.

Նկատի ունենալով ֆինանսական գործընթացների բազմազանությունը, ֆինանսական ցուցանիշների ընդգրկուն համախմբերը, դրանց սահմանային մակարդակների գնահատականների տարատեսակությունը, գնահատման գործընթացում առկա բարդությունները, ատենախոսի կողմից կարևոր նշանակություն է տրվել ֆինանսական վիճակի վարկանշման վրա հիմնված վերահսկողական նոր մոտեցման մշակման հետազոտական աշխատանքներին: Ըստ էության, վարկանշման համակարգի մշակման ժամանակ յուրաքանչյուր հետազոտող ընտրում է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող իր տեսանկյունից կարևոր համարվող ցուցանիշները[8]:

Առաջարկված մոտեցմամբ ստացված արդյունքները ներկայացվել են թիվ 3 աղյուսակում:

**Աղյուսակ 3**

**Այկոհոլային խմիչքներ արտադրող կազմակերպությունների համար առաջարկված մոտեցմամբ ստացված արդյունքները[9]**

| Ցուցանիշը | Երևանի ՎԱՆ արտադրական ֆիրմա ԲԲԸ | | Վեդի Ալկո ՓԲԸ | | Երևանի Արարատ Կոնյակի-գինու կոմբինատ ԲԲԸ | | Երևանի Շամպայն գինիների գործարան ԲԲԸ | | Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ | | Ավշարի գինու գործարան ՍՊԸ | | Արմենիա Վայն Գործարան ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Փաստացի մեծությունը | [illegible] կայունության [illegible] | Փաստացի մեծությունը | [illegible] կայունության [illegible] | Փաստացի մեծությունը | [illegible] կայունության [illegible] | Փաստացի մեծությունը | [illegible] կայունության [illegible] | Փաստացի մեծությունը | [illegible] կայունության [illegible] | Փաստացի մեծությունը | [illegible] կայունության [illegible] | Փաստացի մեծությունը | [illegible] կայունության [illegible] |
| $K_1$ | 0,87 | Բ | 0,28 | Մ | 0,11 | Ց | 0,42 | Բ | 0,77 | Բ | 0,15 | Ց | 0,02 | Ց |
| $K_2$ | 0,13 | Բ | 0,72 | Ց | 0,89 | Ց | 0,58 | Մ | 0,23 | Մ | 0,85 | Ց | 0,98 | Ց |
| $K_3$ | 0,15 | Բ | 2,60 | Ց | 7,95 | Ց | 1,36 | Մ | 0,30 | Բ | 5,63 | Ց | 47,67 | Ց |
| $K_4$ | 19,93 | Բ | 3,05 | Բ | 5,43 | Բ | 2,96 | Բ | 6,01 | Բ | 11,26 | Բ | 1,56 | Ց |
| $K_5$ | 5,021 | Բ | 0,065 | Ց | 0,727 | Բ | 0,008 | Ց | 0,274 | Մ | 0,180 | Մ | 0,027 | Ց |
| $K_6$ | 5,021 | Բ | 0,030 | Ց | 0,164 | Մ | 0,008 | Ց | 0,274 | Բ | 0,180 | Մ | 0,006 | Ց |
| $K_7$ | 0,09 | Ց | 0,13 | Մ | 0,11 | Մ | 0,06 | Ց | 0,15 | Մ | 0,05 | Ց | 0,03 | Ց |
| $K_8$ | 0,03 | Ց | -0,05 | Ց | 0,17 | Բ | 0,02 | Ց | 0,08 | Ց | 0,15 | Բ | 1,14 | Բ |
| $K_9$ | 0,15 | Բ | 0,52 | Բ | 0,32 | Բ | 0,35 | Բ | 0,68 | Բ | 0,30 | Բ | 0,03 | Ց |
| $K_{10}$ | 0,95 | Բ | 0,67 | Բ | 0,82 | Բ | 0,66 | Բ | 0,83 | Բ | 0,91 | Բ | 0,36 | Բ |
| $K_{11}$ | 0,48 | Բ | 0,15 | Բ | -0,06 | Ց | 0,10 | Մ | 0,26 | Բ | 0,08 | Մ | -0,001 | Ց |

---

[8] Платежеспособность (Методика Д. Дюрана) [Электронный ресурс] / http://investment-analysis.ru/metodFSA2/duran-solvency.html (дата доступа 07.04.2013).

[9] Հետազոտության ընթացքում հաշվարկների համար կիրառվել են ընտրված կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվություններից և աուդիտորական եզրակացություններից վերցված 2015 թ. միջինացված և վերամշակված տվյալները:

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| $K_{12}$ | 21,26 | Մ | 50,45 | Բ | 50,15 | Մ | -13,76 | Ց | 48,39 | Մ | 57,16 | Բ | 91,41 | Բ |

Հետազոտված ալկոհոլային խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպությունները, ըստ էության, ՀՀ տնտեսական իրավիճակին համահունչ[10], դրսևորել են ֆինանսական կայունության ցածր մակարդակ, ինչն էլ կարևոր և հրատապ է դարձրել դրանցում ֆինանսական կայունության բարելավմանն ուղղված արդյունավետ միջոցառումների ձեռնարկումը: Ֆինանսական վերահսկողության տեսանկյունից հետազոտված կազմակերպություններում պատկերը հետևյալն է.

- Երևանի «Վան» արտադրական ֆիրմա ԲԲԸ՝ Բ-9, Մ-1, Ց-2,
- «Վեդի Ալկո» ՓԲԸ՝ Բ-6, Մ-2, Ց-4,
- «Երևանի Արարատ կոնյակի-գինու կոմբինատ» ԲԲԸ՝ Բ-4, Մ-4, Ց-4,
- «Երևանի Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ՝ Բ-6, Մ-3, Ց-4,
- «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ՝ Բ-7, Մ-4, Ց-1,
- «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ՝ Բ-5, Մ-3, Ց-4,
- «Արմենիա Վայն Գործարան» ՍՊԸ՝ Բ-3, Մ-0, Ց-9:

Համեմատական վերլուծության գնահատականներով ֆինանսական կայունության արդյունավետ վերահսկողություն ալկոհոլային խմիչքներ արտադրող հետազոտված կազմակերպություններից իրականացվել է «Երևանի ՎԱՆ արտադրական ֆիրմա» ԲԲԸ-ում: Այս կազմակերպությունում վարկանշման համար կիրառված ցուցանիշներից 9-ը եղել են բարձր, 1-ը միջին և 2-ը ցածր մակարդակներում: Հուսալիության տեսանկյունից ֆինանսական կայունության ներքին վերահսկողության լավ մոտեցում է արձանագրվել նաև «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ում, որում 7-ը եղել են բարձր, 4-ը միջին և 1-ը ցածր մակարդակներում: Համեմատական վերլուծության տեսանկյունից ֆինանսական կայունության վերահսկողությունը բավարար արդյունավետ ենք գնահատել «Վեդի Ալկո ՓԲԸ» ՓԲԸ-ում, «Երևանի Արարատ կոնյակի-գինու կոմբինատ» ԲԲԸ-ում, Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ում և «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ-ում:

Ինչ վերաբերում է «Արմենիա Վայն Գործարան» ՍՊԸ-ին, ապա թերևս հետազոտված կազմակերպություններից միակն է, որում արձանագրվել է ֆինանսական կայունության ներքին վերահսկողության ցածր մակարդակ՝ առավելագույն թվով 9 ցուցանիշի գծով:

Խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպություններում ներքին վերահսկողության

---

[10] Матевосян А. В. Оценка и прогноз показателя экономической активности на основании потенциального ВВП РА. Современная наука: тенденции развития: Материалы X Международной научно-практической конференции. 26 августа 2015г.: Сборник научных трудов. Краснодар, 2015.-226 с. ISSN 2308-667X, стр. 89-96.

համակարգի կատարելագործման հիմնական ուղղություններից ատենախոսը կարևորել է հետևյալները.

- Ներքին վերահսկողության տեսության և պրակտիկայի զարգացման հիմնական ուղղություններից կարևոր նշանակություն կունենան օրենսդրական առումով ներքին վերահսկողների պատասխանատվությանն առնչվող խնդիրների լուծումները:
- Նոր խնդիրների լուծման նպատակաուղղվածությունը շեշտադրելու համար ներքին վերահսկողության կառուցվածքի և կառավարման մեթոդների վերակառուցումը:
- Վերահսկողության գործունեության աշխատանքների գիտական հիմքերով կազմակերպումը:
- Կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի որակի բարելավումը: Վերահսկողության քաղաքականությունը և որակի բարելավմանն ուղղված միջոցառումները վերահսկողության աշխատակիցների կողմից ընդունվում են վստահաբար և նրանք մոտիվացված են դրանք կյանքի կոչելու ուղղությամբ:
- Կազմակերպության գործունեության պլանավորման կոշտ և ճկուն համակարգերի համատեղումը:
- Գործառնությունների իրականացման հատուկ սխեմաների միջոցով կազմակերպության գործունեության կարգավորումը:
- Կազմակերպության ներքին վերահսկողության աշխատակիցների արտադրողականության գնահատումը: Դրա համար նախևառաջ անհրաժեշտ է գնահատել վերահսկողական կոնկրետ գործառույթի իրականացման տեսանկյունից յուրաքանչյուր աշխատակցի կարողությունը և պատրաստակամությունը:
- Վերահսկիչների ընտրության, նախապատրաստման, որակի կատարելագործման համակարգերի ներդրումը և կիրառումը: Այս տեսանկյունից միջազգային փորձում առավել կիրառական է փորձաշրջանի կիրառումը:
- Համակողմանի արդյունավետ վերահսկողություն: Վերահսկողության միջոցառումների պլանավորման դեպքում անհրաժեշտ է լիարժեք դիտարկել տնտեսական, իրավաբանական, գիտատեխնիկական, արտադրական, առևտրային և սոցիալական ուղղությունները:

Ատենախոսության «***Եզրակացություններ***» բաժնում հեղինակն ընդհանրացրել և ամփոփել է հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ներկայացված են հետևյալ դրույթներով.

- Կազմակերպության ֆինանսական կայունության բնութագրության տարբեր տեսակետների և մոտեցումների առկայությունը հնարավորություն է տալիս տարբերել դրամի շարք կարևոր բնութագրիչներ, ինչպիսիք են՝ վճարունակությունը, հաշվեկշռի իրացվելիությունը, սեփական կապիտալով ապահովվածությունը, գործարար ակտիվությունը,

պաշարները և ծախսերը կայուն աղբյուրներով ֆինանսավորելու կարողությունը, սեփական և փոխառու կապիտալի միջև նախընտրելի հարաբերակցությունը, կազմակերպության զարգացման համար ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ձևավորումը, բաշխումը և օգտագործումը, ընդլայնված վերարտադրություն իրականացնելու անհրաժեշտությունը, դրամական միջոցների շարժունակության ապահովումը, արտադրության և իրացման գործընթացների անընդհատությունը, եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ և ձեռնարկատիրական գործունեության ռիսկի ցածր մակարդակը:

- Ֆինանսական կայունությունը համարվում է ցանկացած արտադրական կազմակերպության, այդ թվում հետազոտված խմիչքների արտադրության կազմակերպությունների արդյունավետ գործունեության ապահովման գործընթացի անբաժանելի մասը: Այն ուղղակի ազդեցություն է ունենում ինչպես տնտեսական գործունեության մի շարք ցուցանիշների, այնպես էլ ֆինանսական վիճակի կարևոր բաղադրիչներից գործարար ակտիվության և շահութաբերության վրա: Ֆինանսական կայունության վիճակը և մակարդակը, որը գնահատվում է տարբեր համալիր ցուցանիշներով, որոնց վրա անուղղակի ազդեցություն են ունենում մակրո և միկրո միջավայրերի տարբեր գործոններ՝ փոփոխելով կազմակերպության ակտիվների և պասիվների կազմն ու կառուցվածքը, ֆինանսական ռեսուրսների աղբյուրների հարաբերակցությունը:
- Գնահատվել է ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպությունների ֆինանսական կայունությունը՝ կիրառելով տվյալ ճյուղի համար առավել նախընտրելի համարվող ֆինանսական գործակիցները, ինչպես նաև ինտեգրալային ամփոփ ցուցանիշները: Այս առումով, իրականացված ուսումնասիրությունների հիման վրա ատենախոսի կողմից կարևորվել են ինչպես արտերկրյա, այնպես էլ հայ տնտեսագետ հետազոտողների կողմից մշակված մոտեցումները, ինչն էլ հնարավորություն է ընձեռել վերջնարդյունքում առաջարկել հեղինակային մոտեցում:
- Կառուցվել է ֆինանսական կայունության գործոնային գնահատման համալիր մոտեցում, որի կիրառմամբ խմիչքներ արտադրող կազմակերպությունների համար գնահատվել են ֆինանսական վիճակի վրա ազդող բաղադրիչների ազդեցությունները: Ֆինանսական դրության ամփոփիչ գնահատականի արդյունքներով ամենաբարձր ազդեցություն դրսևորող գործոն է տարբերակվել «գործարար ակտիվություն» բաղադրիչը, որպես երկրորդ կարևոր գործոն է տարբերակվել «իրացվելիություն»բաղադրիչը, երրորդ գործոն է տարբերակվել «կապիտալով ապահովվածություն» բաղադրիչը, չորրորդ գործոն է տարբերակվել «վճարունակություն»

բաղադրիչը և ամենացածր ազդեցություն դրսևորող գործոն է տարբերակվել «շահութաբերություն» բաղադրիչը:

- Կազմակերպությունների ֆինանսական կայունության վերլուծությունը և գնահատումը կարևոր տեղ է զբաղեցնում կառավարչական որոշումների համակարգում: Միաժամանակ, ֆինանսական կայունության օբյեկտիվ գնահատականի որոշումը պահանջում է կազմակերպության կայուն զարգացումը բնութագրող հիմնական ցուցանիշների հետ սերտ փոխկապակցության ապահովում: Նշվածն իրագործելու համար, մեր կողմից, համեմատական վերլուծության միջոցով գնահատվել է խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպությունների ֆինանսական կայունությունը և տարբերակվել են ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող կազմակերպություններում ներքին վերահսկողության առումով լավագույն և վատագույն սցենարները:
- Առևտրային բանկերի կողմից փոխառու կազմակերպության վարկունակության մակարդակը գնահատելիս կիրառվում են ցուցանիշների առանձին համախմբեր՝ ըստ երաշխավորված նշանակությունների: Դրանց հիման վրա էլ փոխառուին տրվում է վարկունակության կոնկրետ դաս: Սակայն պետք է նկատել, որ կիրառվող ցուցանիշների նշանակությունները կախված են բանկի տվյալ տնտեսական գործունեության տեսակի նկատմամբ կիրառվող քաղաքականությունից, փոխառուի ճյուղային առանձնահատկություններից: Նկատի ունենալով, որ դեռևս լիարժեք չեն վարկունակության գնահատման միասնական, ֆինանսական դրության բաղադրիչները փոխկապակցող մոտեցումները, ատենախոսն առաջարկել է խմիչքներ արտադրող կազմակերպության օրինակով ֆինանսական կայունության և վարկունակության փոխկապակցությունը գնահատող մոտեցում, որի շրջանակներում դասակարգվել են ռեսուրսների օգտագործման ինտենսիվության փուլերը, կատարվել է դրանց համապատասխան ֆինանսական կայունության և վարկունակության դասերի որոշում և գնահատվել է ռեսուրսների օգտագործման ակտիվությունից կախված վարկային ռիսկը:
- Հիմնարար փոփոխությունները կազմակերպությունների վերահսկողության համակարգում պահանջում են համապատասխան ճշգրտումներ ցանկացած վերահսկողական ընթացակարգերում: ՀՀ-ում ևս կիրառում են ստանում ներքին վերահսկողության ամբողջական համակարգի կատարելագործմանն ուղղված նոր մոտցումները: Նկատի ունենալով այս գործընթացում առկա ձեռքբերումներ, ատենախոսի կողմից, կազմակերպության ֆինանսական կայունության ներքին վերահսկողության կատարելագործման նպատակով առաջարկվել է ֆինանսական կայունության ներքին վերահսկողության մոտեցում, ըստ որի կատարվել է ժամանակային շարքերի վերլուծություն, ընտրվել է կազմակերպության ֆինանսական

կայունության զարգացման ռազմավարությունը՝ գնահատվել են հավանական ռիսկերը և տարբերակվել լուծման նպատակով արդյունավետ համարվող կառավարչական որոշումները:

- Կազմակերպության շահույթի բացասական դինամիկայի դեպքում ֆինանսական ճգնաժամը հաղթահարելու համար կպահանջվի իրականացնել ֆինանսական պլանների ճշգրտումներ, ինչը բյուջետավորման ներդրման պայմաններում կլինի առավել մատչելի ու արդյունավետ և կազմակերպության ֆինանսական համակարգն ամբողջությամբ կատարելագործելու համար էական նշանակություն կունենան ռազմավարական նոր որոշումները:
- Կազմակերպությունների արդյունավետ կառավարումը պետք է հիմնվի մշակվող ռազմավարության վրա, ինչը վճռորոշ նշանակություն ունի շուկայական հարաբերություններին բնորոշ մրցակցությանը դիմակայելու համար: Իսկ այդ ռազմավարության իրացումն ապահովելու նպատակով խիստ կարևորվում են ներքին վերահսկողության համակարգերը: Նկատի ունենալով հիմնախնդրի նշանակությունը, ատենախոսի կողմից մշակվել է վարկանշման մոտեցումներին որպես այլընտրանք՝ ֆինանսական կայունության ներքին վերահսկողության մոտեցում՝ փոխկապակցելով և վերահսկելով կապիտալի ներգրավման, հաշվեկշռի իրացվելիության և գործառնական կառավարման ընթացքում առաջացող ռիսկերը: Միաժամանակ, հստակեցվել են խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպություններում ներքին վերահսկողության համակարգի կատարելագործման հիմնական ուղղությունները:

***Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ աշխատություններում.***

1. Ա.Մ.Հարությունյան, «ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպությունների ֆինանսական կայունության կանխատեսման առաջարկվող մոտեցման տեսամեթոդաբանական հիմքերը» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես 1-2 (173-174), 2015, ISSN 1829-3689, էջեր 26-28:
2. Ա.Մ.Հարությունյան, «ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպությունների ֆինանսական կայունության գնահատման գործոնային մոտեցումը» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, 9-10 (181-182), 2015, ISSN 1829-3689 էջեր 103-106:
3. А.М.Арутюнян, «Подход к внутреннему контролю финансовой стабильности, предлагаемый для организаций РА по производству напитков» // Современная наука; Тенденции развития, Материалы XII Международной научно-практической конференции (30 марта 2016 г.), Сборник научных статей, Краснодар 2016-216с., научно-издательский центр «Априори», ISSN 2308-667X, стр. 118-123.
4. А.М.Арутюнян, «Анализ взаимозависимости финансовой стабильности и платежоспособности организаций Республики Армения по производству напитков» // Современные проблемы социально-гуманитарных наук, 2016, N-2(4), Казань, Научно-теорический журнал, ISSN 2414-4347, (РИНЦ). стр. 145-147.
5. Ա.Մ.Հարությունյան, «Ֆինանսական կայունության ներքին վերահսկողության մոտեցումը ՀՀ ալկոհոլային խմիչքներ արտադրող կազմակերպություններում» // Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, Գիտական հոդվածների ժողովածու - 1(23), Երևանի Անանիա Շիրակացի համալս. հրատ. 2016. 475 էջ, ISSN 1829-2941, էջեր 179-187:
6. Ա.Մ.Հարությունյան, «ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպությունների ֆինանսական կայունության վերահսկողության առաջարկվող մոտեցումը» «Այլընտրանք» գիտական հանդես, 2017, #3, ISSN 1829-2828, էջեր 43-51:

## АРУТЮНЯН АЛЛА МГЕРОВНА

## ПУТИ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ АНАЛИЗА И КОНТРОЛЯ ФИНАНСОВОЙ СТАБИЛЬНОСТИ ОРГАНИЗАЦИЙ В РА (НА ПРИМЕРЕ ПРОИЗВОДСТВА НАПИТКОВ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – «Финансы, бухгалтерский учет»

Защита диссертации состоится 20-ого февраля 2018 г., в 15$^{\underline{30}}$ на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике, действующего при Российско-Армянском университете. Адрес: 0051, РА, г. Ереван, ул. Овсепа Эмина 123.

## РЕЗЮМЕ

Реализация рыночных отношений в хозяйствовании дала возможность отечественным производственным организациям самостоятельно планировать производственные и финансовые средства, осуществлять анализ финансового состояния как собственной организации, так и организаций – бизнес-партнеров. В этих условиях, ставя целью сокращение вероятности попадания в нестабильную финансовую ситуацию, многие организации столкнулись с проблемой обеспечения финансовой стабильности. Значимость исследования указанной проблемы и необходимость ее решения существенно возросли в 2008 г. по причине мирового финансово-экономического кризиса 2008г. и, в частности, колебаний обменного курса доллара в РА в 2009г. и 2014г. Актуальность и безотлагательность выбранной темы обусловлена необходимостью оценки, анализа и прогноза финансовой стабильности организаций, в том числе, применения новых подходов и инструментов внутреннего контроля.

Целью диссертационного исследования является усовершенствование методов анализа и подходов к контролю финансовой стабильности организаций по производству напитков в РА.

Объектом исследования являются подходы, инструменты анализа финансовой стабильности организаций РА по производству напитков и системы их контроля. Предметом исследования стали проблемы усовершенствования подходов к анализу, к прогнозированию и контролю финансовой стабильности организаций РА по производству напитков.

Для достижения поставленной в рамках исследования цели, были поставлены и решены следующие задачи:

- ✓ Изучить экономическое содержание понятия «финансовой стабильности», его характеристики и классифицировать основные воздействующие на нее факторы с точки зрения предприятий по производству напитков;

- ✓ Изучить современные подходы к контролю финансовой стабильности в производственных предприятиях;
- ✓ Выявить проблемы, возникающие в ходе поиска основных факторов, воздействующих на финансовую стабильность предприятий по призводству напитков;
- ✓ Определить пограничные значения показателей, применяемых с целью внутреннего котроля и рейтингования, на основе фактических данных отчественных предприятий по производству напитков.
- ✓ Предложить пути усовершенствования процесса внутреннего контроля финансовой стабильности.

В результате проведенного исследования получены теоретические, методические и практические результаты, из которых в качестве научной новизны можно выделить следующие:

- Разработан комплексный подход факторной оценки финансовой стабильности, посредством применения которого была оценена степень воздействия показателей обеспеченности капиталом, платежеспособности, ликвидности, предпринимательской активности и прибыльности на финансовое состояние предприятий, занимающихся производством напитков.
- Путем сравнительного анализа оценена финансовая стабильность отечественных организаций по производству напитков и дифференцированы наилучшие и наихудшие с точки зрения внутреннего контоля сценарии для организаций по производству алкогольных и безалкогольных напитков;
- Разработан подход к оценке взаимосвязи финансовой стабильности и кредитоспособности на примере организаций по производству напитков, в рамках которого классифицированы стадии интенсивности использования ресурсов, определены соответствующие классы их финансовой стабильности и кредитоспособности, а также оценен кредитный риск в зависимости от активности использования ресурсов;
- В качестве альтернативы рейтинговым подходам разработан подход внутреннего контроля финансовой стабильности путем установления взаимосвязи и контроля за рисками, возникающими в ходе привлечения капитала, рисками ликвидности баланса и оперативного управления.

**ALLA MHER HARUTYUNYAN**

# APPROACHES TO IMPROVE THE ANALYSIS AND MONITORING OF FINANCIAL STABILITY OF ORGANIZATIONS IN RA (ON AN EXAMPLE OF BEVERAGE ORGANIZATIONS)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – «Finance, Accounting»
The defence of the thesis will take place on Februray 20th, 2018, at 15:30 o'clock at 008 Council of Economics of the SCC RA at Russian-Armenian University: 123 H.Emin str., Yerevan, 0051.

## ABSTRACT

Implementation of market relations in economy provided domestic manufacturing organizations with opportunity to independently plan their production and financial resources, analyze the financial state of their own organization and organizations - business partners. In these conditions, aiming to reduce the probability of falling into an unstable financial situation, many organizations have faced the problem of ensuring financial stability. The research importance of this problem and necessity of its resolution significantly increased in 2008 due to global financial and economic crisis of 2008 and in particular, due to fluctuations in the exchange rate of USD in RA in 2009 and 2014. Necessity to evaluate, analyze and forecast the financial stability of organizations, including the application of new approaches and internal control tools, determines the urgency and topicality of the subject chosen.

The aim of the thesis is to improve the methods of analysis and monitoring approaches of the financial stability of beverage organizations in RA. Approaches and tools for analyzing the financial stability of the beverage organizations of the Republic of Armenia and their control systems are the subject of the research. Problems of improving the approaches to analyzing, forecasting and monitoring the financial stability of the beverage organizations of the Republic of Armenia in accordance with the reforms of the economic mechanism are the goal of the study.

To achieve the goal of the study a range of tasks was defined and solved in the frames of it. The main issues are followings:

- ✓ To study the economic content of the concept of «financial stability», its characteristics and classify the main factors affecting it from the point of view of the beverage industry;
- ✓ To study modern approaches to control financial stability in manufacturing enterprises;

- ✓ Identify the problems that arise in the search for the main factors affecting the financial stability of enterprises for the production of beverages;
- ✓ Determine the boundary values of the indicators used for internal control and rating, based on the actual data of the domestic beverage industry.
- ✓ Propose ways to improve the process of internal control of financial stability.

A number of results were obtained during the research whereof the following are scientific innovation:

- An integrated approach to the factorial assessment of financial stability was constructed and the impact of components affecting the financial situation (capital adequacy, solvency, liquidity, entrepreneurial activity and profitability) of the beverage organizations was assessed by its application;
- The financial stability of domestic beverage organizations was assessed on the base of comparative analysis as well as the best and worst scenarios from the point of view of internal control for alcoholic and non-alcoholic beverage organizations were differentiated;
- An approach to assess the correlation between financial stability and creditability was developed in the context of beverage organizations within the framework of which the stages of intensity of resource use were classified, appropriate classes of their financial stability and creditability were identified, and the credit risk was assessed depending on the activity of resource use;
- As an alternative to rating approaches, an approach of financial stability internal control has been developed correlating and monitoring the risks arising in the course of capital raising, liquidity of balance and operational management.